

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՎԵՐԱԲԵՐՈՒՄՆԵՐ

ARSEN YARMAN. *Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surp Pırgiç Ermeni Hastanesi Tarihi*. Yayınlayan Surp Pırgiç Ermeni Hastanesi Vakfı. Editor Ali Çakmak. İstanbul, 2001. 865s.

ԱՐՄԵՆ ՅԱՐՄԱՆ. Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ  
և «Սուրբ Փրկիչ» հայկական հիվանդանոցի պատմությունը, «Սուրբ Փրկիչ»  
Հայ ազգային հիվանդանոցի հրատ.: Հրատարակիչ՝ Ալի Չաքմաք: Ստամբուլ,  
2001, 865 էջ:

2001 թ. 4. Պոլսում հրատարակվել է  
Հանրագիտարանային արժեքի շքեղագույն  
մի ուսումնասիրություն, որը ներկայաց-  
նում է առողջապահության պատմությունն  
Օսմանյան կայսրությունում: Աշխատու-  
թյունը գրված է թուրքերեն լեզվով: 865 մե-  
ծածավալ էջերից կազմված նկարազարդ  
մենագրությունը ներկայացվում է ներքո-  
հիշյալ գլուխներով՝

- ա. Առաջաբան,
  - բ. Հայ բժշկության պատմություն,
  - գ. Օսմանյան բժշկությունը և Հայերը,
  - դ. Օսմանյան դեղագործությունը և Հա-  
յերը,
  - ե. Հայ բուսաբաններ,
  - զ. Հայերը և «Կարմիր մահիկ»-ը, Աղ-  
քատախնամը (ծերանոց), «Երեխաների  
պաշտպանության միությունը»,
  - է. Անատոլիայի հայկական հիվանդա-  
նոցները,
  - ը. Մահմուդ Բ-ի և Գազադ Արթին Ամի-  
րայի բարեկամությունը,
  - թ. «Սուրբ Փրկիչ» հայկական հիվան-  
դանոցի պատմությունը,
  - ժ. Օսմանյան կայսրության առողջապա-  
հության ասպարեզում,
  - ի. Մեծ ավանդ ունեցած Հայ բժիշկների  
կենսագրությունները:
- Գիրքը եզրափակում են օգտագործված  
աղբյուրների, տեղանունների ու անձնա-  
նունների հարուստ ցանկերը:
- Աշխատության առաջին էջերում կար-  
դում ենք Ստամբուլի համալսարանի պրո-

ֆեսոր Մեթե Թունջայի և Եվրոպայի գիտ-  
նականներից ճանաչված ուսուցչաբան  
Լեոն Շվարցենբերգի գիրքն արժևորող, Հա-  
յերի ավանդը խորապես գիտակցող խոսքե-  
րը: Շվարցենբերգի առաջնորդողում կա  
նաև անդրադարձ մեր ժողովրդի տառա-  
պանքի, սակայն ոտքի վրա մնալու ոգու  
ուժին:

Իր տեսակի մեջ եզակի այս աշխատու-  
թյան հեղինակ Արսեն Յարմանը պոլսահայ  
համայնքի երևելիներից է սերում: Սովորել  
է Կ. Պոլսի Մխիթարյանների մոտ, ապա ու-  
սումը շարունակել Իտալիայում: Տիրապե-  
տում է լեզուների: Այն, որ հետազոտողը  
հայազդի է, մեծապես շահեկան դեր է ունե-  
ցել ուսումնասիրությունը հնարավորին  
չափ լիարժեք ներկայացնելու առումով,  
քանի որ Օսմանյան կայսրությունում մշա-  
կույթի, գիտությունների, արհեստների և ո-  
րոշ այլ բնագավառների զարգացման պատ-  
մությունն անխզելիորեն կապված է հիմ-  
նականում Հայ համայնքի գործունեության  
հետ: Հիմնականում հայկական աղբյուրնե-  
րում են ամբարված (Հայերեն և Հայատառ  
թուրքերեն գրական ժառանգության մեջ,  
փաստաթղթերում, պարբերական մամու-  
լում և այլուր) Օսմանյան կայսրության  
կյանքի ամենատարբեր կողմերի ուսումնա-  
սիրության վրա լույս սփռող նյութերը:  
Բազմաթիվ հեղինակներ, որոնք ձեռնարկել  
են Օսմանյան կայսրության կյանքի այս  
կամ այն ասպարեզի ուսումնասիրությունն  
առանց օգտագործելու հայկական նյութը՝ ի

վիճակի չեն եղել այն լիարժեք ներկայաց-  
նելու, այլև բավարարվել են ուրվագծու-  
մով:

Այս աշխատանքը շահեկան է նաև ու-  
սումնասիրված Հարուստ աղբյուրների, ար-  
խիվային նյութերի առումով: Ներկայաց-  
ված են չափազանց մեծ Հետաքրքրություն  
Հարուցող օսմաներեն եզակի փաստաթղ-  
թեր, սուլթանական հրամանագրեր՝ բերաթ-  
ներ, Ֆերմաններ, Հայերեն, Ֆրանսերեն,  
Հայատառ թուրքերեն նյութեր: Առատորեն  
ի մի են հավաքված Թուրքիայի արևելյան  
Հայաբնակ բոլոր գավառների, Արևմտյան  
Հայաստանի բնակավայրերը ներկայացնող  
նկարները՝ վանքեր, պատմական հուշար-  
ձաններ, կալվածագրեր, հաշվեցուցակներ,  
այգտեղ գործած առողջապահական հիմ-  
նարկների, շենքերի արտաքին ու բժշկա-  
կան կահավորման, աշխատակիցների բժշ-  
կական առօրյային վերաբերող բազմաթիվ  
նկարներ: Բնականաբար, շատ են Հայկա-  
կան դեղաբանների, բժիշկների, այցեցրտու-  
թի, մամուլում նրանց գովազդների, Հայ-  
տարարությունների Հայերեն, օսմաներեն,  
Հայատառ թուրքերեն օրինակները: Այս ա-  
մենը, Հիրավի, մեծ տպավորություն է գոր-  
ծում:

Գրքի վերնագիրը զուսպ է՝ ընդգծելով  
ընդամենը Հայերի ունեցած դերը թուրքա-  
կան առողջապահության բնագավառում,  
չնչտեղով մինչօսմանյան կայսրության Հայ  
բժշկության պատմությունը ամփոփող  
նյութերը, նրա ավանգույթները: Հիաց-  
մունք է պատճառում գրքում ծայրաստի-  
ճան ճաշակով ու տեղին ներկայացված կա-  
ռավարական, Համայնքի ու անձնական հա-  
վաքածոների, վիճակագիր արձանագրու-  
թյունների, փաստաթղթային կամ կիրառական ա-  
ռարկաների, մանրանկարների ու նկարնե-  
րի, ճարտարապետական կառույցների ար-  
տաքին ու ներքին տեսքերի, Հայաշատ քա-  
ղաքների, թանգարանային, Հնագիտական  
բրածո իրերի, գրամաների, ձեռագիր մատ-  
յանների, մանրանկարների, զարդերի,  
չքանչանների, կիրառական շատ առարկա-  
ների, ինչպես նաև առողջապահությունը  
մոտավոր կամ հեռավոր առնչություն ու-  
նեցող իրերի, սարքերի գծանկարների ու  
լուսանկարների, գրքերի, ատլասների և

շատ ու շատ տարբեր, բազմալեզու նյու-  
թերի բազմությունը: Ազդեցիկ թիվ են  
կազմում օսմաներեն նյութերը, որոնցից  
շատերն այս ուսումնասիրության էջերում  
են առաջին անգամ լույս աշխարհ գալիս:

Գրքի երկրորդ նպատակի՝ Կ. Պոլսի Ս.  
Փրկիչ ազգային հիվանդանոցի պատմու-  
թյան մասին գլուխն սկսվում է 447 էջից  
միայն: Այն ոչ միայն Հայերին ու Թուր-  
քիայի այլ ազգերին ծանայող հիվանդանո-  
ցի պատմությունն է, ներկան, այլև՝ ապա-  
զան պայմանավորող ծրագրերն ու պարա-  
դաները: Մեծ արժեք են ներկայացնում  
տարբեր ցուցակները, բժշկական միութ-  
յունների ու Հայ բուսաբանների մասին  
գլուխը, բժշկական մամուլն ու մասնագի-  
տական դրականությունը, տարբեր ասպա-  
րեզների բժիշկների ցուցակները, նրանց  
մասին տեղեկություններով, նկարներով  
Հանդերձ: Հեղինակը հետևել է անգամ  
նրանց ճակատագրին՝ լիարժեք ներկայաց-  
նելու Համար Թուրքիայում ապրած ու գոր-  
ծած իր գրքի Հերոսներին:

Այս գիրքը լիովին արդարացրել է Հեղի-  
նակի առջև դրված կարևորագույն խնդիր-  
ներից հիմնականը՝ շարադրել առողջապա-  
հության պատմությունն օսմանյան իրա-  
կանությունում: Ավելին՝ առաջին անգամ  
թուրքերեն լեզվով գիտական գրականութ-  
յան մեջ նման ծավալով ներկայացվել է  
Հայ ժողովրդի պատմությունն իր սկզբնա-  
վորման շրջանից ի վեր, արևմտահայութ-  
յան պատմությունը, պոլսահայ Համայնքի  
պատմությունը, արևմտահայերի դերն ու  
ավանգն այդ երկրի կյանքի ամենատարբեր  
բնագավառներում, նրանց նպաստը: Անդ-  
րադարձ կա ամիրանների, պատրիարքական  
աթոռի, մտավորականների, առանձին ան-  
հատների, ինչպես նաև բժշկության պատ-  
մության Հայ երախտավորների գործու-  
նեությունը, կենսագրականներով, տոհմա-  
ծառերով, նրանց դեղանկարներով կամ լու-  
սանկարներով Հանդերձ:

Գրքում ի մի են բերված եվրոպական  
տարբեր երկրներում ուսանած, գիտական  
կարևորագույն կենտրոններում Հայտնա-  
գործությունների Հեղինակներ դարձած, ա-  
պա Թուրքիայում գործունեություն ծավա-  
լած Հայ բժիշկների, նրանց տարբեր երկր-  
ներում բարձրագույն պարգևների ու դի-

տական աստիճանների արժանացած լինելու, նաև այլ ասպարեզներում գործունեության մասին տեղեկությունները: Գիրքը հարուստ է հայ բժիշկներին վերաբերող տարբեր մանրամասն ցուցակներով, նկարներով՝ սկսած Բալկանյան, Առաջին համաշխարհային ու Ազատագրական պատերազմների մասնակիցների, բժշկության տարբեր բնագավառները ներկայացնողներին, մինչև օտար երկրներում թուրքական կառավարությունների դիվանագիտական ներկայացուցչություններում, հյուպատոսություններում, թուրքական բանակում ծառայած հայազգի ներկայացուցիչներին:

Հիրավի կոթողային մի աշխատանք, որի հեղինակը՝ Մխիթարյան Հայրերի անսպառ աշխատասիրությունը որդեգրած մտավորական այս ժառանգը, անհավատալի գործ է կատարել: Այն հավասարապես մեծ ավանդ ու հետաքրքրություն է ներկայաց-

նում ինչպես օսմանյան իրականությունում բժշկության, առողջապահության պատմության, այնպես էլ ընդհանրապես բժշկության պատմության մերձավոր արևելյան թևի ուսումնասիրության, արևելագիտության համար:

Ի՛նչ անձնագոհ, տքնաջան ուսումնասիրության արդյունք է այս 5 կգ-ից ավել կշռող գիրքը՝ միայն այն թերթողը, կարգացողը կարող է գիտակցել: Գալով հայ բժշկության, առողջապահության պատմության արևմտահայ հատվածի ուսումնասիրության գործում Արսեն Յարմանի ուսումնասիրության անուրանալի և մնալուն արժեքին, այն թուրքերենով ներկայացնելուն՝ պիտի ոչ միայն հիացումի ու բարձր գնահատանքի մղի մեզ, այլև շուտափույթ թարգմանվի Հայերեն նաև հայագիտությանը, հայ բժշկագիտությանը լավագույնս ծառայելու համար:

KEVORK PAMUKCIYAN. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar. 4 cilt. Aras Yayınclık. Yayına hazırlayan Osman Koker. Cilt 1-Istanbul Yazıları (249s.); Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler(255s.); Cilt 3- Zamanlar, Mekanlar, İnsanlar(373s.); Cilt 4- Biyografileriyle Ermeniler (449s.). İstanbul, 2002-2003.

ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ. Հայ աղբյուրների ներդրումը պատմության մեջ, 4 հատոր, «Արաս» հրատարակչատուն: Հրատարակության է պատրաստել Օսման Քյոքերը: Ստամբուլ, 2002-2003 թթ. հ. 1՝ Ստամբուլը սկզբնաղբյուրներում (249 էջ), հ. 2՝ Հայատառ թուրքերեն սկզբնաղբյուրները (255 էջ), հ. 3՝ Ժամանակներ, բնակավայրեր, մարդիկ (373 էջ), հ. 4՝ Հայ կենսագրություններ (449 էջ):

Վերջերս Կ. Պոլսի «Արաս» հրատարակչատունը լույս ընծայեց Հայտնի բանասեր ու աղբյուրագետ Գեորգ Բամպուքյանի թուրքերեն աշխատությունների քառահատոր շարքը: Այն մեր մշակույթի նվիրյալի և համեստագույն անձի՝ իր կյանքի ընթացքում հրատարակած թուրքերեն հոդվածների, աշխատությունների ամբողջականությունն է: Հատորները հրատարակության է պատրաստել, ծանոթագրել, մեկնաբանել Օսման Քյոքերը:

Գեորգ Բամպուքյանը ծնվել է Կ. Պոլսում, արմատներով էվերեկցի կերպասավաճառի Հայտնի ընտանիքում<sup>1</sup>: Սովորել է

Գատրգյուղի Սեն-ժոզեֆ կոլեջում, աշակերտելով “Hayat Yarih Mecmuası” ամսաթերթի հրատարակիչ և խմբագիր Շեվքեթ Ռաթոյին: Հենց նա էլ 1965 թ. հրավիրել է իր նախկին սանին աշխատակցելու իր ամսաթերթին, որը շարունակվել է մինչև թերթի դադարումը՝ 1982 թ.: Գ. Բամպուքյանն աշխատակցել է Ստամբուլի, Անկարայի, Հայաստանի, Մխիթարյան միաբանության և սփյուռքահայ շատ ու շատ պարբերականների, ուր հանդես է եկել հայագիտական հոդվածներով:

Երկար տարիներ (1942-1956 թթ.), Գ. Բամպուքյանը, տքնաջան աշխատանքի

<sup>1</sup> Գեորգ Բամպուքյանի մասին կենսագրական և ուսումնասիրությունների մասին տես Կ. Արասում համար 4. Վաղահաս ու անփոխարին-

ների կորուստ մը՝ Գեորգ Բամպուքյան (1923-1996)».- «Հասկ», է տարի, Անթիլիաս, Լիբանան, 1995-96թթ., էջ 659-670:

չնորհիվ Կ. Պոլսի Հայաբնակ թաղամասերի գերեզմանոցներից և մատենագիտական աղբյուրներից Հավաքել է մոտ 2300 պատմական արժեք ներկայացնող տապանագրեր: Բալբլիի, Բաղլարբաշլի տապանագրերի վերծանություն մասին անտիպ հոդվածները տպագրվեցին քառահատորյակի առաջին մասում, որը նվիրված էր Կ. Պոլսին: «Սկյուտարի Հայոց գերեզմանոցի տապանագրերը» աշխատությունը Հայաստանում հրատարակելու համար հեղինակը կյանքի վերջին օրերին հանձնել է աղբյուրագետ Պարույր Մուրադյանին: Այս աշխատությունների շնորհիվ, բազմաթիվ տարեթվային ճշտումներ են կատարվել Հայ երևելիների կենսագրականներում:

Գ. Բամպուլքյանը հղել է այն հզակի գիտնականը, որի Համագործակցությունն են ապավինել թուրքական մի շարք ծանրակշիռ Հանրագիտարաններ՝ Հայկական նյութերը ներկայացնելու ակնկալություններ: Դրանք են՝ Բնշատ էքրեմ Գոչուլի «İstanbul Ansiklopedisi», Յըլմազ էոզթունայի «Turk Muzikisi Ansiklopedisi». Մուստաֆա Աքգադի խմբագրած «Turk Dili ve Edebiyatı Ansiklopedisi», Անա Հրատարակչատան «Genel Kültür Ansiklopedisi» և «Ana Britanika», «Belleten» լուրջ հրատարակություններ:

Գ. Բամպուլքյանը թուրքական մշակույթի մեջ ներգրում ունեցած երևելի Հայ անձանց կենսագրականների, օսմանյան մատենագրությունը հարստացնող Հայկական աղբյուրների, աշխատությունների, թուրքական պատմության տարբեր շրջանների վրա լույս սփռող Հայ մատենագիրների դործերի թարգմանություններ և քննություններ նպաստել է Հայ և թուրք մշակույթների կամրջմանը, հնարավորինս, գոնե իր աշխատակցած հրատարակություններում կանխել է մեր մշակույթի, պատմության շուրջ կանխակալ գործերի, խեղաթյուրումների թվի աճը: Այդ ամենը նա արել է զուսպ գրչով, անվիճելի փաստերով: Յուրաքանչյուր Հակահայկական հոգված, որը այս կամ այն կերպ առնչվել է գիտության հետ, անպայման որպես պատասխան ունեցել է Գ. Բամպուլքյանի զուսպ, համոզիչ հակահարվածը, որին մեծապես նպաստել է

նրա բարեխիղճ ուսումնասիրողի կեցվածքը:

1967 թ. Կ. Պոլսի երջանկահիշատակ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան պատրիարքի կողմից Բամպուլքյանը նշանակվել է Պատրիարքարանի Դիվանի վարիչ և Ս. Խաչ Դպրեվանուց, Թուրքիայի Հայոց Պատրիարքության «Շողակաթ» կրոնաբարոյական, գրական և պատմաբանասիրական տարբեր խմբագիր: Ավելի ուշ նա նշանակվում է նաև Պատրիարքարանի ավագ քարտուղար, մշակութային հարցերով խորհրդական, Պատրիարքարանի գարավոր արխիվի և մատենադարանի պատասխանատու: Գ. Բամպուլքյան – պարտաճանաչ ուսումնասիրողի և աշխատասեր մարդու երկու տասնամյակների հոգածություն շնորհիվ, գեթ մասամբ, կանոնավորվեցին Կ. Պոլսի Պատրիարքարանի գրերի վերկուտակված հսկայածավալ արխիվը, դրա դարանը: Այդ ընթացքում նա մեղվաջան աշխատանքով մաքրեց, ցուցակագրեց, դասավորեց հազարավոր փաստաթղթեր, նամակներ, կալվածագրեր, ձեռագրեր, պատառիկներ, եկեղեցական գրագրությունների մատյակ Հատորներ, մամուլը: Մի քանի լեզուների իմացությունը նպաստեց գնահատելու և հասկանալու, գրելու, տպագրելու ամեն մի նորահայտ նյութ, կոնդակ, ծառայեցնելով դրանք Հայ ժողովրդի մշակույթի հարստացմանը:

Կ. Պոլսի Համար հրգեհները միշտ էլ ողբերգական են եղել: Այս մասին նույնիսկ մատենագրական գործեր կան: Հովհաննես Տերոյենցի, «Պատվելի էֆենտի», Հայ առաքելական եկեղեցու Հավատարմագույն պաշտպանի, «անվեղար կաթողիկոսի» մահվան 100-ամյակի հիշատակի ոգեկոչման առթիվ Պատրիարքարանի հոբելյանական գրքույկի հիշարժան տարեթվերից 1887-ի տակ կարգում ենք, որ Տերոյենցի երկու տները Սկյուտարում հրո ճարակ են դառնում: Մեկ տարի չանցած, 19-րդ դարևմտահայության մեծագույն մտավորականն իր մահկանացուն է կնքում: Նա չէր կարողացել ապրել առանց իր գրքերի, աշխատասիրությունների, իր կյանքը իմաստավորող գրականության: Այդպիսի մի հրգեհ էլ 1982 թ. լափեց Գ. Բամպուլքյանի

տունը, հրո ճարակ գարձնելով նրա հարստությունը՝ արխիվի, գրագրարանի մի մասը: Պատմում են, որ նա խելակորույս վիճակում բազմաթիվ անգամներ նետվել է բոցերի մեջ, ազատել հազվագյուտ մատյաններ:

Ասում են, որ հրգեհից հետո Գ. Բամպուլեքյանն ավելի մեծակյաց ու ինքնամփոփ է դարձել: Իր կյանքի մնացած 14 տարիները նա նվիրեց Պատրիարքարանի մատենադարանին, կազմեց ձեռագրացուցակները, շարունակեց աշխատակցել հայ, թուրք մամուլին: Նրա գիտական ուսումնասիրությունն արգյունքում երևան եկան մի շարք կարևոր աշխատասիրություններ: 1981 թ. լույս տեսավ նրա «Յակոբ Նալբանի Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը եւ աշակերտները» մենագրությունը: 1984 թ. հրատարակ իջավ Բամպուլեքյանի «Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678-1741) և իր աշակերտները»: Այս երկու մենագրություններն ամբարում են շատ կարևոր նյութեր հետազոտության ժամանակաշրջանի մասին: Սա և՛ հայ եկեղեցու երախտավորների Օսմանյան կայսրության նման մի երկրում նրանց դիվանագիտական բացառիկ գործունեության ու գրական ժառանգության վերհանում է, և՛ պարզ մի հայելի, ուր արտացոլվում է արևմտահայ իրականություններում ներխուժած կաթոլիկական կրոնի, նաև դրա դեմ ուղղված հայ ժողովրդի պայքարը, որ դեկավարում էին Կ. Պոլստ պատրիարքները հայ առաջագեծ մտավորականության հետ: Հովհաննէս Կոլոտի ստեղծած «Գրական-թարգմանական» դպրոցի, նրա ավանդույթները շարունակող Յակոբ Նալբանի գործունեության մասին պայմանավորված եղել այդ շրջանի դրական ժառանգության կարևոր մաս կազմող հայատառ թուրքերեն ինքնուրույն և թարգմանական գործերը: Ահռելի փաստական նյութ է ամբարված այս մենագրություններում, որը մեր ժողովրդի պատմության շատ ու շատ անհայտ էջերի վրա լույս է սփռում:

Գ. Բամպուլեքյանի ուսումնասիրությունների, նախասիրությունների հիմնական ոլորտը թուրքալեզու (հայատառ թուրքերեն) գործերն են եղել: Նրա քառահատորյակի Բ հատորն ամբողջովին նվիրված է հայատառ թուրքերենին: Նա խմբագրել

է աղբյուրագիտական հույժ կարևորություն ունեցող Երեմիա Չէլչյի «Բնագրերի գործերը, մասնավորապես «Իսթանպուլ թարիհի» (թուրքերեն, Իսթանպուլ, 1988), «Պատմությունը Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» (Իսթանպուլ, 1988), ծանոթագրել ու թուրքերենի թարգմանել Աբրահամ Անկյուրացու «Գրավումն Կոստանդնուպոլսոյ» երկը<sup>2</sup>, իր հայանպաստ քաղաքականութեամբ հայտնի Սուլթան Մահմուդ Բ-ին նվիրված 4 հայ հեղինակների չափածո ներբողները վերածել լատինատառ թուրքերենի<sup>3</sup>:

Գ. Բամպուլեքյանի թուրքերենով գրված ամբողջական գործերի քառահատոր հրատարակության պարտական ենք հրատարակիչ Օսման Քյոքերին և «Արաս»-ի հրատարակիչներին: Նրանք ոչ միայն հավաքել են Գ. Բամպուլեքյանի հրատարակված ու անպիստահող գործերը, խմբագրել, կազմել 3 ներշնչող, անջատ հատորներ, այլև հեղինակի ողջ գործերի հիման վրա ստեղծել են մի վերջին 4-րդ հատոր, արևմտահայ իրականության երևելիների կենսագրությունները ներկայացնող գիրք: «Խմբագիրը, խղճամիտ ու գիտական բծախնգրություններ իրարմէ զատորոշած է երկու տեսակ կենսագրականները, առաջինը՝ լայնաշունչ ու հեղինակին կողմէ գրի առնուած իբր ամբողջական կենսագրություն, երկրորդը՝ միայն մեկ կամ երկու տողով, հեղինակին կողմէ գրուած որպէս սիւնակներու տակ ենթատեղեկություն: Առաջինները տպուած են մեծատառ, իսկ երկրորդները գրուած են մանրատառ: Այս կերպով յարգուած է հեղինակին գիտական վարկը, քանի որ ողբացեալ Բամպուլեքեան անշուշտ երբեք չէր երեւակայած, թե իր այդ ցիրուցան կենսագրական նօթերը օր մը պիտի կարենային մեկտեղուիլ որպէս կենսագրական բառա-

<sup>2</sup> Այս երեք ուսումնասիրությունները տեղ են գտել քառահատորի Ա հատորում, որը նվիրված է Ստամբուլին:

<sup>3</sup> Հայատառ թուրքերեն գրականությանը նվիրված հատորում է տեղ գտել, նախապես, 1991 թ. հրատարակված լինելով Անկարայում հրատարակվող «Belleter» գիտական պարբերականում:

րան»<sup>4</sup>, – գրում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը:

Հրատարակիչն իր առաջաբանում, գնահատելով թուրքական հանրագիտարաններին աշխատակցելու Գ. Բամպուքճյանի վաստակը, նշում է, որ նա որպես հայ է գասել նաև այն անձանց, որոնք հայկական ծագում ունենալով հանդերձ, ավելի ուշ մահացավանություն են ընդունել, ինչպես օրինակ թուրք իրականության ամենահայտնի անուններից մեկը՝ Միմար Սինանը: 450 էջերում տեղ են գտել նաև մի շարք հայտնի բանաստեղծներ, աշուղներ, որոնք թուրքական մականուններ են ունեցել: Դրանցից են, օրինակ, «Նիհադի» անվան տակ՝ Կ. Պոլսի հայ պատրիարք Հակոբ Նալյանը, 18-րդ դ. աշուղ Կարապետ Դըղանը՝ հայտնի որպես Քարաջաօղլան<sup>5</sup>: Կենսագրական հատորում օսմանցիների պաշտամունքի առարկա ճարտարապետը տեղ է գտել որպես «Սինան կամ Քոճա Սինան»: Հատորի վերջում տրված է պոլսահայ գրա-

գետի հայերեն աշխատասիրությունների ցանկը, որը «Մարմարայի» կարծիքով կարող է լրացվել: Հետաքրքիր է Դ հատորի շապիկը: Սա նկարիչ Դիմիտրի Նալբանդյանի «Վերնատուն» հայտնի նկարն է, ուր հայ մտավորականները մեկտեղված են գաղնամուրի առջև նստած Կոմիտասի շուրջը:

Գ. Բամպուքճյանի թուրքերեն աշխատասիրությունների այս քառահատորյակը թուրք և հայ հրատարակիչների անչափ ողջունելի մի գործն է, նրա գիտական ժառանգության ու հիշատակի խնկարկումը, որը պիտի մեզ մղի հայ մատենագրությանն այդչափ նպաստ բերած մեր հայրենակցի գործերի թարգմանությունը, հրատարակությունը կազմակերպելուն, ապահովելու նրա անվան արժանի տեղը մեր հանրագիտարաններում, հայ գրականադիտության ու պատմագրության մեջ<sup>6</sup>:

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

<sup>4</sup> «Մարմարա», Լոյս տեսաւ Գէորգ Բամպուքճեանի Ձորրորդ թրքերեն Հատորն ալ. Այս Փառավոր Հատորը Կ'ընդգրկէ... 24 սեպտեմբեր 2003 թ. էջ 1 և 4:

<sup>5</sup> K. P a m u k c i y a n. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar. Cilt 4- Biografileriyle Ermeniler. İst., 2003, s. IX-XI.

<sup>6</sup> Տողերիս Հեղինակը, թեև պատիվ չի ունեցել անձամբ ծանոթ լինելու Գ. Բամպուքճյանին, սակայն տարիների ջերմ, բարեկամական, մասնագիտական նամակագրություն է ունեցել նրա հետ և երախտագիտությունը է հիշում նրա գնահատականները, մեծ սիրով պահում նրա նվիրած ու Հեղինակած գրքերը, իր և հայատառ թուրքերենի վերաբերյալ թուրք գիտնականների հոգվածների առանձնատիպերը